

ԿԱՏԱՐ ՄԱՍԻՆ



891.71Ը.

4-24

ՀԱՅԳՈՏԷՐՈՏ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԻ ՊԵՐԿԱԳՐՆԵՐ
1940

ժողովրդական ասելուկներ և հեքյաթներ հավաքեց

Ո. Կապիցա

Նկարները՝

Յու. Վասնեցովայի

Ռուս. փոխադրեց՝

Մկրտիչ Կորյուն

891.714
4-24

2011-05



Մեկը՝ Միշո Կատվիկյան,
Մեկը՝ Մաշո Կատվիկյան:
Յերկու կատու մոմուան,
Սիրով ընկերներ դառան:
Միշոն չերգեր և ասում,
Մաշոն նստում ու լսում:
— Միշո, — ասում է Մաշոն:
— Ի՞նչ է, — ասում է Միշոն,
— Արի քիչ ել խաղ անենք,
Մկնիկներին դադ անենք:
Վեր են կենում խաղ անում,
Մկնիկներին դադ անում:



—Բռւմ, բռւմ, բռւմ,
Բռւմ, բռւմ, բռւմ,
Հրդեհ ընկավ կառվի տուն:
Կատուն թռավ անակից,
Ու ագատվեց կրակից:
—Ո՞ւր ես փախչում, կառվիկ, ուր,
Հափն ե բերում դույլով ջուր:
—Ո՞վ ե գալիս, տեսե՞ք, ո՞վ,
Ձին ե գալիս լապտերով:
—Տեսե՛ք, ահա, են մյուսին,
Ցախավելը իր ուսին,
Շնչակառուր հաղիւն հաղ,
Շունն ե գալիս վաղեմեղ:



60303 - 67

Հենց վոր փորրիկ մառանը
Իմացավ ուր ե մառանը,
Ել չթողեց վոչ մի բան,
Կաթ ու մածուն, միս; չորթան:
Բայց մի անգամ ես բանը
Տեսան Մանան ու Նանը,
Փայտ ու ճիպոտ ձեռներին
Վրա տվին գող կառվին:
—Ս, քեզ մածուն, ա՛յ քեզ միս,—
Ասում ելին ու տալիս:
Հավ ծեծ կերավ մառանը,
Մաքից հանեց մառանը:





Լինում ե չի լինում մի ծերուկ, ունենում ե մի կատու ու մի աքլոր:
Մի անգամ ծերուկն անտառ ե գնում փայտի, իսկ կատուն հաց ե տա-
նում նրան: Տանը պահապան են թողնում աքլորին ու խիստ պատվիրում՝
— Տես, աքլոր ախպեր, չլինի-չիմանանք թե մոտենաա լուսամուտին, թե
չե աղվեսը կփախցնի քեզ: Մենք հեռու անտառ ենք գնում, ձայնդ մեզ չի
հասնի:

Հենց վոր ծերուկն ու կատուն գնում են, աղվեսն իսկույն գալիս ե,
կանգնում լուսամուտի տակ ու յերգում.

«Մուղրուղո՛ւ, աքլոր ջան,
Կարմրակատար, կչկչան,
Լուսամուտին թե մոտ գաս
Մի բուռ սխեռ կստանաս»:

Լսում ե աքլորը, բայց սիրտ չի անում լուսամուտին մոտենալ: Հիշում
ե ծերուկի ու կատվի խրատները: Աղվեսը մի քիչ հեռանում ե լուսամուտից,
գնում մինչև փողոցի անկյունը, նորից յետ գալիս՝ կանգնում լուսամուտի
մոտ ու յերգում.

«Աքլորիկ, աքլորիկ,
Վռակեզո՛ծ կատարիկ,
Սիրունիկ գլխիկով,
Մետաքսե մորուքով,
Լուսամուտին թե մոտ գաս
Մի բուռ սխեռ կստանաս»:

Աքլորը չի համբերում, բացում ե լուսամուտը, դուրս հանում գլուխն
ու նայում: Աղվեսը բռնում ե նրան ու փախցնում: Աքլորն ողնովթյան ե
կանչում կատվին.

«Աղվեսն անիրավ,
Ինձ անտառ տարավ,
Բարձր լեռներով,
Խոր-խոր գետերով,
Իմ ընկեր կատու,
Հասիր, ուր ես դու»:

Աքլորի ձայնը հասնում ե կատվին թե չե, չորս վտար ուներ, չորսն ել
փոխ ե առնում, վազում հասնում աղվեսին, ազատում աքլորին, տուն քե-
րում ու ասում.

— Տես հա, աքլոր ախպեր, ել դուրս չնայես պատուհանից, չհավատա-
աղվեսին, թե չե այնպես կխժուի քեզ, վոր մեծ թիքեղ ականջդ կթողնի:

Մի անգամ ծերուկն ելի անտառ ե գնում փայտի, իսկ կատուն հաց ե
տանում նրան ու նորից պատվիրում են աքլորին՝ տունը պահպանել ե պա-
տուհանից դուրս չնայել:

Իսկ աղվեսն անհամբեր սպասում եր նրանց տանից դուրս գնալուն. նա
մեծ ախորժակ ուներ աքլոր ուտելու: Հենց վոր տեսնում ե ծերուկն ու կա-
տուն գնացին, մոտենում ե լուսամուտին ու յերգում՝

«Աքլորիկ, աքլորիկ,
Վռակեզո՛ծ կատարիկ,
Սիրունիկ գլխիկով,
Սանրված մորուքով,
Սիրունիկ քթիկով,
Սպիտակ ճակատով,
Լուսամուտին թե մոտ գաս,
Մի բուռ սխեռ կստանաս»:

Աքլորն անց ու դարձ ե անում խրճիթում ե ձայն չի հանում: Աղվեսը
լուսամուտից մի բուռ սխեռ ե գցում ներս: Աքլորն ուտում ե սխեռն ու
ասում.

— Չե, աղվես, խաբում ես: Ինձ այնպես կխժուես, վոր մեծ թիքես
ականջս կթողնես:

— Ինչեք ես ասում, աքլոր ախպեր, միթե յես քեզ ուտելու միտք ու-
նեմ: Յես միայն ուզում եմ, վոր դու հյուր գաս ինձ մոտ, տեսնես, թե
ինչպես եմ ապրում յես, ճանաչես ինձ ու լավ կարծիք կազմես իմ մասին, —
ասում ե աղվեսն ու նորից յերգում.

«Աքլոր իմ, բարեկամ,
Դուրս նայիր մի անգամ,
Ու տես թե մեր դռան
Վորջան լավ սալեր կան,
Թռչում են առանց ձի,
Դուրս արի ու հեծի,
Միասին նստենք մենք,
Դաշտ գնանք, զբոսնենք»:

Աքլորը չի համբերում, ու հենց վոր դուրս է նայում լուսամուտից, աղ-
վեսը վրա չե պրծնում, իր թաթերի մեջ առնում ու փախցնում: Աքլորն
սկսում է կանչել.

«Աղվեսն անիրավ
Ինձ փախցրեց, տարավ,
Մութ անտառներով,
Նիստ անտառներով,
Բարձր սարերով,
Խոր-խոր ձորերով,
Իմ ընկեր կատու,
Հասիր, ուր ես գու»:

Աքլորի ձայնը հասնում է կատվին թե չե, սա վազում հասնում է աղվե-
սին, փրկում աքլորին ու տուն բերում:

— Քեզ ասացի չե, վոր պատուհանը բաց չանես, դուրս չնայես, թե չե
աղվեսն աջնպես կխփի քեզ, վոր մեծ թիբեզ ականջդ կթողնի: Տես, հա,
լավ լսիր, վաղը մենք ավելի հեռու յենք գնալու:

Նորից ծերուկն անտառ է գնում փախտի, իսկ կատուն հաց է տանում,
աղվեսը լուսամուտի տակ թաքնված յերգում է.

«Աքլոր իմ, բարեկամ,
Դուրս նայիր մի անգամ,
Տես, ինչ լավ է դրում,
Միթե դու չես լսում
Աղմուկը սալերի,
Ջնգոցը զանդերի,
Տես, տոն է ամեն տեղ,
Ու մրգեր կան համեղ»:

Յերգում է աղվեսը մի անգամ, յերկու անգամ, իսկ աքլորը միշտ լուռ
է: Աղվեսն ելի է սկսում խոսել.



— Ինչ է, աքլոր ախպեր, չլինի խլացել ես:

— Չե, աղվես, ել չես խաբի ինձ, պատուհանից դուրս չեմ նայի:

Աղվեսը լուսամուտից մի բուռ ցորեն ու սխեռ է գցում ներս ու նո-
րից յերգում:

«Աքլորիկ, աքլորիկ,
 Վոսկեղոծ կատարիկ,
 Սիրունիկ գլխիկով,
 Սանրված մորուքով,
 Սիրունիկ քթիկով,
 Սպիտակ ճակատով:
 Աքլոր իմ, բարեկամ,
 Դուրս նայիր մի անգամ,
 Մեր դիմաց, հենց այստեղ
 Պալատներ կան շքեղ,
 Յորենը կոտորով,
 Մրդերը՝ փթերով,
 Դուրս յեկ, կեր, լիացիր,
 Բոլորին տիրացիր:

Յեվ ապա ասում ե.

— Դո՛ւն ե մի անգամ դուրս նայիր, աքլոր ախպեր, տես թե վարձան հրաշքներ կան այստեղ: Դեհ, բավական ե, դուրս արի: Մի հավատա կատվին: Յեթե յես քեզ ուտել ուզենայի, վաղուց ելի կերել: Այնինչ յես քեզ սիրում եմ, ուզում եմ աշխարհ տեսնես, խելքի դաս: Դեհ, դուրս յեկ աքլոր ախպեր: Այ, յես հեռանում եմ մինչև փողոցի անկյունը, — ասում ե ու սեղմվում պատին:

Աքլորը թռչում ե լուսամուտի գոգը, նայում հեռվից, բայց չի կարողանում տեսնել, գնացել ե աղվեսը թե՛ վոչ: Ու հենց վոր գլուխը մի քիչ դուրս ե հանում լուսամուտից, աղվեսը վրա յե հասնում ու բռնում. չե՛ վոր աղվեսին ել հենց այդ եր պետք: Աքլորը բղավում ե, բղավում, բայց ձայնը կատվին չի հասնում: Ծերուկն ու կատուն շատ հեռու եյին գնացել:

Յերեկոյան ծերուկն ու կատուն տուն են գալիս ու տեսնում, վոր աքլորը չկա: Շատ են վշտանում, յերկար խոսում են աքլորի մասին ու վերջը վճռում, վոր կատուն գնա աքլորին աղատի: Կատուն առնում ե մի բաճկոն, մի զույգ կարմիր կոշիկներ, գլխարկ, պարկ, մի սուր ու մի սաղ: Հագնում ե գնած շորերը, կոշիկները, սաղը վրդը դրում ու գնում աղվեսի խրճիթի մոտ յերգում:

«Ծընգըլ, մընգըլ իմ սագիկ,
 Դու վոսկելար իմ սագիկ...
 Տանն ես, եյ, դու աղվեսիկ,
 Մանրատուտիկ, յերկարպոչ,



Ձայն տուր, տանն ես դու, թե՛ վոչ:
 Քանի աղջիկ ունես դու,
 Քանի մանչիկ ունես դու,
 Մեկի անունն Աշկա յե,
 Մյուսինը՝ Մաշկա յե,
 Մեկելինը՝ Մաշկա յե,
 Ե՛լ, աղվեսիկ, յերկարպոչ,
 Ձայն տուր, տանն ես դու, թե՛ վոչ:

Լսում ե աղվեսն ու աղջիկներից մեկին ուղարկում իմանալու, թե ո՞վ ե յերգում դրսում:

Աղջիկը դուրս ե գալիս թե չե, կատուն բռնում ե ու իր պարկը պցում, ու նորից յերգում:

«Ծընգըլ, մընգըլ իմ սագիկ,
 Դու վոսկելար իմ սագիկ...
 Տանն ես, եյ դու, աղվեսիկ,
 Մանրատուտիկ, յերկարպոչ,



Զայն տուր, տանն ես դու, թե՛ վոչ:
 Քանի աղջիկ ունես դու,
 Քանի մանչիկ ունես դու:
 Մեկի անունն Աշկա յե,
 Մյուսինը՝ Մաշկա յե,
 Մեկեինը՝ Մաշկա յե,
 — Ե՛ր, աղվեսիկ յերկարպոչ,
 Զայն տուր, տանն ես դու, թե՛ վոչ:

Աղվեսն այս անգամ սողաններից մեկին է ուղարկում իմանալու, թե ինչու աղջիկն ուշացավ և ով է յերգում գրսուն:

Տղան դուրս է գալիս թե՛ չե, կատուն բռնում է նրան ել ու դրում պարկը: Այս ձևով նա աղվեսի բոլոր ճուտերին հավաքում է իր պարկի մեջ:

Աղվեսն աքլորին է ուղարկում իմանալու, թե ինչու ուշացան իր ճուտերը գրսուն: Աքլորը դուրս է գալիս, տեսնում կատվին և շատ ուրախանում: Կատուն գրկում է աքլորին և մի շնչով փախչում գալիս տուն:

Փխո, փխո, իմ փխիկ,
 Գոչը սիրուն, խատուտիկ,
 Վիզը մաքուր, սպիտակ,
 Զույգ նշաններ թևիդ տակ:
 Փխո, փխո, իմ փխիկ,
 Գոչը սիրուն, խատուտիկ,
 Մի հեռանա մեր տանից,
 Յեվ դու մենակ մի թող լինձ:
 Ուր վոր յերթա՝ շուտ արի,
 Մեր Լալիկին որորի,
 Վոր քեզ սիրեմ անընդհատ,
 Վոր քեզ միշտ տամ քաղցր կաթ,
 Ինչ յես ուտեմ՝
 Տամ քեզ ել:
 Վզիդ կապեմ
 Ժապավեն:



ԿԱՏՈՒՆ, ԱՅԾՆ ՈՒ ՎՈՉԽԱՐԸ

Մի տան բակում ապրում էին մի կատու, մի այծ ու մի վոչխար։ Ապրում էին նրանք համերաշխ։ Թե մի կտոր խոտ գտնեին, կիսում էին այծն ու վոչխարը, իսկ ծեծը միշտ կառավին եր բաժին ընկնում։ Նա այնքան ճարպիկ գող էր, վոր խելի պարապ չէր մնում, ամեն բույս մի բան թոցնում էր։ Վայ էր, թե մի տեղ մի լավ սան պահած լինեին—խեղճն տանում էր։

Մի անգամ այծն ու վոչխարը զրույց էին անում։ Մեկ էր, վորտեղից—վորտեղ նրանց մոտ է գալիս մոռան կառավիկը, չալ ճակատիկը, աղի-աղի մղկատվով ու յերեք վորտքի վրա կաղին տալով։

Վոչխարն ու այծը հարցնում են.

— Այ դու չար կառավիկ,

Այ չալ ճակատիկ,

Ինչո՞ւ յես լալիս։

Կատուն պատասխանում է.

— Կատուն լաց չլինի,

Բա ո՞վ լաց լինի,

Տատիկը ծեծեց,

Մազերս փետեց,

Ուղում էր վոր դեռ

Շան սատակ աներ։

— Պատճառը,—հարցնում են այծն ու վոչխարը։

— Պատճառն այն էր, վոր պատահմամբ մի քիչ սեր լպստեցի,—ասում է կատուն ու շարունակում լացը.

— Այ դու չար կառավիկ,

Այ չալ ճակատիկ,

Ել ինչո՞ւ յես լալիս,—հարցնում են այծն ու վոչխարը։

— Վոնց լաց չլինեմ, տատիկն ինձ ծեծելիս ասում էր.—փետան վոր մեր տուն գա, ինչո՞վ հյուրասիրեմ, յերբ սեր չկա, ինչ արած, ստիպված վոչխարն ու այծը պիտի մորթեմ, փետին հյուրասիրեմ։



Այստեղ վոչխարն ու այծը խոր ախ են քաշում ու ասում.

— Ախ դու չալ կառավիկ, հիմարի գլուխ, ինչի դուր տեղը մեզ վոր-ձանքի մեջ գցեցիր։ Ու սկսում են մտածել, թե ինչ անեն։

Վերջը վորոշում են յերեքով փախչել։

— Ապա, վոչխար ախպեր, քու ճակատն ամուր է, մի վորձիր տեսնենք, կարո՞ղ ես դուրը ջարդել,—ասում է մոռան կատուն։

Վոչխարը գնում է գալիս ու գլխով տալիս դռանը։ Դուռն ուրբվում է ու ընկնում։ Փոշու ամպ է բարձրանում, խոտերը ուրբվում են գետնին։

Վագում են այծն ու վոչխարը, իսկ նրանց հետևից յերեք վորտքով, լընդին տալով ցատկում է կառավիկը, չալ ճակատիկը։ Շատ վազելուց կատուն հոգնում ու ողնուխյան է կանչում ընկերներին.



— Իմ մեծ ու միջնակ յեղբայրներ, միք թողնի, վար ձեր փոքրիկ յեղբայրը մնա դաշտում ու գազաններին կեր դառնա:

Այժմ նրան իր շալակն է առնում ու շարունակում ճանապարհը, վոր անցնում եր լեռներով, հովիտներով ու ավազուտներով: Վոչ ցերեկ են հարցնում, վոչ գիշեր, ինչքան ուժ ունեյին վոտքերի մեջ, գնում են: Վերջապես հանդիպում են մի հնձած արտի: Արտի մեջ մի անագին խոտի դեղ է լինում: Մեր ճանապարհորդները նստում են հանգստանալու: Մի աշնանային ցուրտ յերեկո յե լինում:

— Վճրտեղից կրակ ճարենք,—մտածում են այժն ու վոչխարը: Իսկ կառավիկ չալ ճակատիկը մի քիչ արեթ եր ճարել: Նա արեթը դնում է այժի

պողերի արանքը և առաջարկում վոչխարի հետ գլուխ-գլխի դարկել: Այժն ու վոչխարն ախպես ուժեղ գլուխ-գլխի յեն դարկում, վոր նրանց աչքերից կայծեր են դուրս թռչում ու արեթը այրում: Այսպիսով նրանք կրակ են ստանում:

— Այս լավ յեղալ, մենք հիմա կտաքանանք, ասում է կառավիկ չալ ճակատիկը ու այրում է խոտի դեղը:

Մի քիչ տաքացած չտաքացած՝ մեկ ել պուպուստ, դալիս է մի անկոչ հյուր—բրդոտ արջ քեռին:

— Թողեր մի քիչ ել յես տաքանամ ու հանգստանամ,—ասում է բրդոտ արջ քեռին,—ինչ վոր վառ եմ գլուխ ինձ:

— Բարով հազար բարի, բրդոտ արջ քեռի, ես վորտեղից ե գալլդ:

— Արոտատեղով անցնելիս կուլի բռնվեցի գլուղացիների հետ, մի քանի ճիպոտի հարված կերա: Գնում եմ աղվեսի մոտ բուժվելու:

Նրանք գիշերն անց են կացնում չորս հոգով միասին. արջը խոտի դեղի տակ, կառավիկ չալ ճակատիկը՝ դեղի վրա, իսկ այժն ու վոչխարը՝ կրակի կողքին: Այժմ, վոչխարն ու արջը քնում են, իսկ կառավիկ չալ ճակատիկը չի քնում ու հսկում է նրանց: Մեկ ել տեսնում է, ուղիղ դեպի կրակն են գալիս յոթը գորշ գալլեր, իսկ ութերորդը սպիտակ է:

— Ոհո,—ասում է սպիտակ գալլը, տեսնելով այժին ու վոչխարին,—այս ովքեր են հավաքվել այստեղ, յեկեք մի ուժներս փորձենք: Այստեղ այժն ու վոչխարն անից կորցնում են իրենց, իսկ կառավիկ—չալ ճակատիկն ասում է.

— Մյ, դու, սպիտակ գալլ, վոր պետն ես բոլոր գալլերի, մի բարկացնի՛ր մեր առաջնորդին, առանց այդ ել նա բարկացած է: Վայ նրան, ով ձեռքն ընկավ: Միթե չես տեսնում մորուքը, նրա ուժը հենց իր մորուքի մեջ է, մո ըուքով նա գազաններին սպանում է, իսկ պողերով մաշկում նրանց: Դուք լավ կանեք գլուխ տաք նրան ու խոնարհաբար խնդրեք, վոր թույլ տա ձեզ խոտի դեղի տակ պառկած իր փոքր յեղբոր հետ խաղ անեք:

Գալլերը խոնարհաբար գլուխ են տալիս այժին ու շրջապատելով արջ քեռուն՝ սկսում են ընկնել նրա հետ: Արջն ուժեքը հավաքում է, հավաքում ու թաթով ախպես պինդ հասցնում գալլերից մեկին, վոր բոլոր գալլերը վոռնում են անից ու պոչերն իրենց քաշած փախչում, գնում:

Այս դեպքից հետո այժն ու վոչխարը շալակում են կառավին ու արագ փախչում տուն:

— Բավական է,—ասում են նրանք,—աննպատակ թափառել, մեկ ել տեսար սրանից վատ փորձանքի պատահեցինք:

Իսկ նրանց տերը, ծերուկն ու իր պառավը, շատ են ուրախանում, յերբ տեսնում են նրանց վերադարձը:

Խուճուճ-մուճուճ մազերով
 Իմ չալ փխտն նազերով,
 Դունչ ու թաթիկ լպստում,
 Վառարանի մոտ նստում,
 Կամ թռչում ե կտուրին
 Ու ձայն տալիս ձտերին:
 Ճուտերից մեկը — մաիկ
 Վառարանին ե տիտիկ:
 Մյուսները թռչկոտում,
 Խաղ են անում, ցատկոտում:
 — Ո՞վ ե մեծը մեզանից,
 Ո՞վ ե փոքրը ամենից:
 — Յերբ մեծանանք վաղը մենք,
 Մկներին վորս պիտ անենք,
 Իսկ մեր տատիկ մեծ մաման,
 Մնա տանը պահապան:



60303-67

Տեսեք, տեսեք մեր Մակիչին,
 Ձի յե քշում բակի միջին:
 Տեսեք ես կով նստած կնիւն,
 Ո՞վ ե տեսել եսպես բան:
 Յերեխեքն ել յելած շուտ
 Հեծած մի-մի կառավի ճուտ,
 Ձի յեն արել չափ տալիս
 Ու ծտերն են ծափ տալիս:



ՓԻՍՈ ՓԻՍԻԿՅԱՆԸ

Մարդու մեկը մի գող ու անպիտան կատու ունեւր։ Վայ եր, թե մի բան գնեյիր պահարանում, ասենք թե սեր, կաթ, կամ միս, բոլորը կգողանար, կստեր։ Իսկ մուկ բռնել՝ ծուլանում եր։ Տերը ձանձրացավ կատվից, տարավ անտառ ու թողեց աջատեղ։

Կատուն յերկար թափառում եր անտառում, մեկ ել նրա դիմացն ե յեկնում աղվեսը։ Նայում ե կատվին ու զարհուրում։

— Նս քանի տարի յե ապրում եմ անտառում, բայց այսպիսի գաղանդեռ չեմ տեսել,— մտածում ե աղվեսն ու խոնարհ բարե տալով կատվին հարցնում.

— Ասա ինձ, սիրուն պատանի, ո՞վ ես դու ե ի՞նչ ե քո անունը։ Կատուն ուռեցնում ե մեջքը, ցցում բեխերը ու ասում.

— Յես գալիս եմ սիրերյան անտառներից. ինձ ասում են Փիսո Փիսիկյան։

— Դեանք ինձ մոտ, Փիսո Փիսիկյան։

Աղվեսն իր բռնն ե տանում կատվին ու սկսում են միասին ապրել։

Մյուս որը աղվեսը գնում ե ուտելիք բերելու, իսկ կատուն մնում ե տանը։ Վազում ե աղվեսը դաշտով, մեկ ել հանդիպում ե գալլին։

— Աղվես քուրիկ, ես ուր ես կորել։

— Յես արդեն ամուսնացել եմ։


— Ո՞ւմ հետ։

— Սիրերյան անտառներից յեկած Փիսո Փիսիկյանի հետ։

— Իսկ չի՞ կարելի արդոք նրան տեսնել։

— Կարելի յե, միայն թե Փիսո Փիսիկյանը բարկացկոտ մարդ ե, վայ ե թե մեկը նրան դուր չեկավ— իսկույն կհոշոտի։ Նրա մոտ առանց նվերի չի կարելի գալ։ Նվերներ վերցրու, չեկ ծանոթացիր։

Աղվեսը շարունակում ե ճանապարհն ու հանդիպում արջին։





— Աղվես քուրիկ, ես ուր ես կորել:

— Յես արդեն ամուսնացել եմ:

— Ո՞ւմ հետ:

— Սիրելիյան անտառներից յեկած Փիտո Փիսիկյանի հետ:

— Իսկ չի՞ կարելի արդյոք նրան տեսնել:

— Կարելի չէ, միայն թե Փիտո Փիսիկյանը բարկացկոտ մարդ է, վաչ է թե մեկը նրան դուր չեկավ—իսկույն կհոշոտի: Նրա մոտ առանց նվերի չի կարելի գնալ: Մի նվերից բանից պատրաստիր, լեկ ծանոթացիր:

Յեւ ահա, հենց հաջորդ ուր արջն ու գայլն իրենց նվերներով հանդիպում են իրար աղվեսի տան մոտ: Գայլը մի վոչխար եր նվեր բերել, իսկ արջը մի ամբողջ յեղ:

— Բարև, բարև, բրդոտ քեռի, —ասում է գայլը:

— Հազար բարի, գայլ ախպեր, ես կողմերում չեմ հանդիպել արդյոք աղվես քուրիկին ու Փիտո Փիսիկյանին, — հարցնում է արջը:

— Չե, յես ել վաղուց նրանց եմ սպասում:

— Դեհ, մի ապրես, թուր ձեն տուր:

— Չե, արջ քեռի, յես չեմ գնա, ինքդ գնա, դու ինձանից սրտոտ ես:

— Չե, գայլ ախպեր, յես չեմ կարող գնալ:

Հենց այս ժամանակ, վորտեղից-վորտեղ դուրս է պրծնում նապաստակը: Արջը ձայն է տալիս նրան:

— Ե՛յ, շլդիկ, մի ես կողմն արի:

Նապաստակը վախեցած մոտ է վազում:

— Ե՛յ, շլդիկ, դու գիտես թե վորտեղ է ապրում աղվես քուրիկը:

— Գիտեմ, արջ քեռի:

— Դեհ, մի ապրես, շտապ թուր նրա մոտ, ասա վոր արջ քեռին ու գայլ ախպերն իրենց նվերներով վաղուց սպասում են աղվես քուրիկին ու Փիտո Փիսիկյանին:

Նապաստակն իսկույն թռչում է աղվես քուրիկի մոտ: Իսկ արջն ու գայլն սկսում են մտածել, թե վորտեղ թաղնվեն: Արջն ասում է.

— Յես կբարձրանամ չինարի ծառի վրա:

— Իսկ յես ուր պահվեմ, — հարցնում է գայլը, — չե՞ վոր յես ծառ բարձրանալ չեմ կարող: Թագցրու ինձ մի տեղ, արջ քեռի:

Արջը գայլին պահում է թվերի տակ, ծածկում չոր տերևներով, իսկ ինքը բարձրանում է չինարի ծառի վրա, տեսնելու, թե չի՞ գալիս արդյոք Փիտո Փիսիկյանը:

Նապաստակը վազում է աղվեսի մոտ ու ասում.

— Արջ քեռին ու գայլ ախպերը ինձ ուղարկեցին ասելու, վոր իրենք իրենց նվերներով վաղուց սպասում են քեզ ու Փիտո Փիսիկյանին:

— Քոիր, շղթիկ ու ասա, վոր հենց հիմա գալիս ենք:

Վերջապես յերևում են կատուն ու աղվեսը: Արջը նկատում է նրանց ու ասում գայլին.

— Գայլ ախպեր, աղվեսն ու Փիտո Փիսիկյանը գալիս են: Ինչքան ել փոքր է եզ Փիսիկյանը:

Հենց վոր կատուն յեզան միա է տեսնում, աչքերը վաղաստակում են, վրա չե հասնում, սկսում է ատամներով ու ճանկերով միար պոկոտել ու մամլո-
տալ:

— Միանձ... միանձ... միանձ...

Իսկ սարսափած արջին թվում է, թե ասում է՝

— Ես քիչ ե, ես քիչ ե:

«Մեծ գազան չե, բայց շատակեր ե»,—մտածում է արջը: «Մենք չոր-
ասով չենք կարող այդքան ուտել, իսկ մենակ իրեն քիչ ե»:

Գայլն ել է ուղում տեսնել Փիտո Փիսիկյանին, բայց տերևների արան-
քից հնարավոր չեր: Քիթը մի քիչ դուրս է հանում: Կատուն տերևների խըշ-
շոց լսելով կարծում է թե մուկ է, հոպ, ցատկում է ու ճանկերով բռնում
գայլի մուկը:

Գայլը դուրս է թռչում թագստոցից ու փախչում, իսկ կատուն վախից
ցատկում է չինարի ծառի վրա, վորտեղ զանվում եր արջը:

Արջը սարսափում է.

«Եհէ, վտանգն ինձ ել հասավ»,—մտածում է նա, ծառից ցած է նե-
ստում իրեն ու փախչում: Իսկ աղվեսը բղավում է նրանց հետևից.

— Տեսա՞ք, թե ինչ ոյին խաղաց ձեր զլխին Փիտո Փիսիկյանը:

Փախչում են արջն ու գայլը ատանց հետ նայելու և վողջ անտառով մեկ
հոշակում կատվի համբավը:

Այդ դեպքից հետո անտառի բոլոր գազանները վախենում են կատվից:





Հայրը կառավի,
 Մայրը՝ կառավի,
 Ահա ձեզ մի
 Ընտանիք:
 Հայրը ցորեն է ծեծում,
 Մայրը զգեստ է գործում:
 Են ճաշերին մի մախի,
 Վառարանի մոտ ախտիկ,
 Թաթով բռնում
 Հոտ-հոտում,
 Ու գաթա յեն
 Կրծոտում:



Փխո, փխո, փխիկներ,
 Չալպուռիկ պոչիկներ,
 Վորսացել եք մկնիկներ:
 Ճայեր, ճայեր բկիկներ,
 Թըջել եք ձեր պոչիկներ
 Ու վորսացել ձկնիկներ:



— Այ իմ լավ փխիկ,
 իմ փափկամաղիկ,
 իմ փափկամաղիկ,
 իմ յերկարվզիկ,
 ես քանի որ եր
 Ռ՛ւր եյիւր կորեւ:

— Ջաղաց գնացի,
 Յորեն մաղեցի,
 Այլուր աղացի,
 Գաթա թխեցի:


— Կեցցես, իմ փխիկ,
 իմ փափկամաղիկ,

Քո համեղ գաթից
 Մի քիչ ել տուր ինձ:



Մեր տան հատակի տակին
 Ջրանոււմ ե մի սոջավոր տիկին:

Քառասուն մուկ տընք-տընքալով,
 Վստ փստալով, ճատ, ճատալով,



Քաշ են տալիս ահա մի բեռ,
 — Բեռը ի՞նչ է՝
 — Քառասուն սիսեն:

Նայեցեք այս կողմը դուք,
 Չարածճի լերկու մուկ,
 Յերկու կողակ շալակել
 Վազ են տալիս անաղմուկ:



Փխոն չեղավ շուկա գնաց,
Գնեց գաթա, փափուկ հաց:
Փխոն խանութ մտավ տրադ,
Գնեց մեղր ու կարագ:

— Փխո, դու չես ուտելու,
Թե՛ փորդուդ ես տանելու:
Պատասխանեց փխոն պարզ.
— Համ չես կուտեմ, համ տղատ:



Պատ. խմբագիր՝ Վ. Գրիգորյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Գապարյան
Լիտոգրաֆ. Գևորգի՝ Ս. Գապարյան
Սերագրիչ՝ Ս. Փառադանյան

Գլավիիի լիագոր Բ—1059 Հրատ՝ 5123.
Պատկեր 43. Տիրաժ 3000.
Հանձնված է արտադրության 8 հունվարի, 1940 թ.
Ստորագրված է տպագրության համար 5 մարտի, 1940 թ.
Հայկեսհրատի I տպարան, Յերեվան, Լենինի 65



33 01

100 84

87



ПРО КОТА

Гвз Арм. ССР, Ереван, 1940 г.